ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԾՀԱՊՁԲ-1/5-4

ք. Երևան 12 .07.2017թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ Կ. Կարապետյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա՝ այսուհետև «Գնորդ», մի կողմից և «ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ-ն՝ ի դեմս ընկերության տնօրեն Ա. Աբրահամյանի, ով գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետև՝ «Վաճառող», մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով /այսուհետ՝ Պայմանագիր/ սահմանված կարգով, ծավալներով և գնման ժամանակացույցով նախատեսված ժամկետներում՝ (հավելված N 2) Գնորդին կամ նրա կողմից որոշված Ստացողին (այսուհետ՝ Ստացող) մատակարարել Պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագրով նախատեսված ապրանքներ /այսուհետ՝ Ապրանք/, իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել այդ Ապրանքը և վճարել դրա համար /հավելված N 3/:

2. ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

2.1 Վաճառողն Ապրանքը մատակարարում է Գնորդին /Ստացողին/ Պայմանագրի N 2 հավելվածով՝ գնման ժամանակացույցով սահմանված ծավալներով և ժամկետներում:

2.2 Վաճառողը Ապրանքը հասցնում է Գնորդին /Ստացողին/՝ ՀՀ ՋՈՒ կապի և ԱԿՀ վարչության պահեստ՝ ավան Բալահովիտ ՀՀ ՊՆ 83580 զորամաս:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1 Գնորդն իրավունք ունի՝

3.1.1 Ապրանքը Պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել Ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի.

3.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք.

ա) պահանջել հատուցելու Ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել Ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ապրանքը Պայմանագրին համապատասխանող որակի Ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.4 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել Պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ապրանքի համար վճարված գումարը.

3.1.3 Եթե հանձնվել է Պայմանագրով որոշվածից պակաս քանակի Ապրանք, ապա.

ա) պահանջել լրացնելու Ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված Ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե Ապրանքի համար վճարվել է, ապա՝ պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ Ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող Ապրանքը և հրաժարվել մնացած Ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր Ապրանքներից և պահանջել վճարելու սույն պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող Ապրանքի անհատույց փոխարինում Պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան Ապրանքով.

3.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել Ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու Պայմանագրի 7.2 կետով նախատեսված տույժը:

3.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է Ապրանք՝ Պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև Ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը.

3.1.7 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է Պայամագիրը.

3.1.7.1 Վաճառողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի Ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) Ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի,

3.1.8 Զննել Ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

3.2 Գնորդը պարտավոր է՝

3.2.1 Կատարել Պայմանագրին համապատասխան մատակարարված Ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

3.2.2 Վաճառողի հանձնած Ապրանքից Պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ Ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին.

3.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև Պայմանագրի 7.5 կետով նախատեսված տույժը:

3.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին Պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ Պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով Ապրանքի բնույթից և նշանակությունից:

3.2.5 Պայմանագրի 3.3.4 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս վնասները:

3.3 Վաճառողն իրավունք ունի՝

3.3.1 Գնորդից /Ստացողից/ պահանջել ընդունելու Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքը.

3.3.2 Գնորդից պահանջել հատուցելու վնասները, եթե Վաճառողը Գնորդի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով Պայմանագրի լուծումից հետո՝ ողջամիտ ժամկետում, այլ անձի՝ Պայմանագրով նախատեսվածից ավելի ցածր, սակայն ողջամիտ գնով վաճառել է Ապրանք՝ համապատասխան Պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով:

3.3.3 Գնորդից /Ստացողից/ պահանջել վճարելու համապատասխան Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված Ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները.

3.3.4 Միակողմանի լուծել Պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է Պայամագիրը:

3.3.4.1 Գնորդի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են Ապրանքի համար վճարելու ժամկետները:

3.3.5 Գնորդի /Ստացողի/ համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել Ապրանքը:

3.4 Վաճառողը պարտավոր է՝

3.4.1 Գնորդին /Ստացողին/ հանձնել Ապրանքը՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում:

3.4.2 Պայմանագրի 2.2 կետին համապատասխան՝ Ապրանքը Գնորդին /Ստացողին/ մատակարարել վերջինիս հետ նախապես համաձայնեցված ժամկետներում:

3.4.3 Ապահովել Ապրանքի մատակարարումը սույն պայմանագրի 3.1.2 բ/ և 3.1.5 կետերին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

3.4.4 Գնորդին /Ստացողին/ հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ Ապրանք:

3.4.5 Գնորդին /Ստացողին/ հանձնել Պայմանագրի N 1 և N 2 հավելվածներով նախատեսված որակի և քանակի Ապրանք՝ Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Գնորդի /Ստացողի/ պահանջով տրամադրել Ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

3.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, Պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

3.4.7 Հետ տանել Գնորդի /Ստացողի/ կողմից Պայմանագրի 3.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված Ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել Ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

3.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

3.4.9 Պայմանագրի 3.1.7 կետի համաձայն Պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս վնասները:

3.4.10 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

4. ԱՊՐԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Պայմանագրով Վաճառողի կողմից հանձնման ենթակա Ապրանքի ընդհանուր գինը կազմում է՝ 1 421 400 (մեկ միլիոն չորս հարյուր քսանմեկ հազար չորս հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված բոլոր ծախսերը, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը: Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

4.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա, 15 բանկային օրվա ընթացքում՝ Պայմանագրի վճարման ժամանակացույցով՝ հավելված N 3-ով, նախատեսված ամսում, /եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 բանկային օրվա ընթացքում/ բայց ոչ ավելի, քան նույն հավելվածով՝ վճարման ժամանակացույցով տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ապրանքի դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումն սույն կետի պայմաններով իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 2017թ. դեկտեմբերի 10-ը:

5. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

5.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված Ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

6. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

6.1 Վաճառողն Ապրանքը հանձնում է Գնորդին /Ստացողին/՝ Պայմանագրի N 2 հավելվածում նշված ծավալներով և ժամկետներում:

6.2 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ավարտի օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է ներկայացնում Պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 4.1), ինչպես նաև էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով՝ մատակարարված Ապրանքի մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը (Հավելված N 4):

6.3 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատակարարված Ապրանքը համապատասխանում է Պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար Պայմանագրով նախատեսված միջոցները: Ընդ որում Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ բացասական եզրակացությունը և չհաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

6.4 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից հնգօրյա ժամկետում էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և պատասխանատու ստորաբաժանման՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի կողմից տրված՝ պայմանագրի կամ դրա մի մասի կատարման վերաբերյալ դրական եզրակացությունը կամ Ապրանքը չընդունելու դեպքում՝ սույն պայմանագրի 6.3-րդ կետի «ա)» ենթակետում նշված փաստաթղթերը:

6.5 Եթե Գնորդը Պայմանագրի 6.4 կետով սահմանված ժամկետում չի ընդունում Պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և Պայմանագրի 6.4 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած Ապրանքի որակի և Պայմանագրով նախատեսված՝ մատակարարման ժամկետների պահպանման համար:

7.2 Վաճառողի կողմից Պայմանագրով նախատեսված Ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված Ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.3 Պայմանագրի 7.2 և 7.4 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

7.4 Պայմանագրի 1.1 կետում նշված Տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ Պայմանագրի ընդհանուր գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

7.5 Գնորդի կողմից Պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

7.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

8. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ /ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ/

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

9.1 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև Պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը իրավունք ունի միակողմանիորեն լուծելու Պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև Պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային Պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում Պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման Պայմանագրի կատարմամբ Գնորդի ստացածով:

9.2 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի Պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

9.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

9.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է Պայմանագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող Ապրանքի միավորի գնի կամ Պայմանագրի գնի արհեստական փոփոխման: Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ Պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9.5 Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև ապրանքի ամբողջ ծավալով մատակարարման ժամկետի ավարտն ընկած ժամանակահատվածի յուրաքանչյուր վեցերորդ ամիսը լրանալը Գնորդը «Գնումների մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա սահմանված կարգով շրջանակային համաձայնագրերով կազմակերպում է տվյալ ապրանքի ձեռքբերման նոր ընթացակարգ: Եթե այդ ընթացակարգի արդյունքում սահմանված կարգով ձևավորված նվազագույն միավոր գինը որևէ ապրանքի մասով ցածր է Պայմանագրով սահմանված գնից, ապա այդ մասով Գնորդը մեկ աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին ներկայացնում է ապրանքը ձևավորված ցածր գնով մատակարարելու պահանջ և Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագրի նախագիծ: Եթե Վաճառողը երկու աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում և Գնորդին ներկայացնում Պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ համաձայնագիրը, ապա այդ մասով Գնորդը ընտրված մասնակցի հետ կնքում է նոր պայմանագիր և դրա ուժի մեջ մտնելու ամսաթվին համապատասխան այդ մասով միակողմանիորեն լուծում է Պայմանագիրը՝ առանց Վաճառողի նկատմամբ Պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցների կիրառման:

9.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև Պայմանագրով այդ ժամկետը լրանալը Պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Գնորդի մոտ չի վերացել

գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

9.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ Պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են Պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել Պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

9.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Վաճառողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

9.9 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, Պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

9.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

9.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 N 4 և N 4.1 հավելվածները համարվում են Պայմանագրի անբաժանելի մասը:

9.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ԶՈՒ կապի և ԱԿՀ վարչությունը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ
ք. Երևան Բագրևանդի 5	ՀՀ ք. Աբովյան, 3-րդ միկրո/2, 12₂, բն. 27
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն	«Արդշինբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2470101111250010
ՀՎՀՀ 00867415	ՀՎՀՀ 03531121
ՀՀ ՊՆ ՆՏԱ ԳԼԽԱՎՈՐ ՀԱՄԵՆՏԻ ՊԵՏԻ ՊԺԿ	Տնօրեն
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ	Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 1
N ՇՀԱՊՁԲ-1/5-4 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Հ/հ	Ապրանքի անվանում	Բնութագրող հիմնական հատկանիշները
1	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 20N60C DM-330 սնուցման բլոկի)	Դաշտային մետաղյա դիելեկտրիկ N-channel տիպի տրանզիստոր, լարումը մինչև 600վ, հոսանքի ուժը 20Ա, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
2	Էլեկտրոնային պարագաներ (DM-330 սնուցման բլոկի MOSPEC դիոդ)	Դիոդային MOSPEC U30D20C , լարումը մինչև 50-200վ, հոսանքի ուժը 30Ա, աշխատանքային ջերմաստիճանը -50...+150°C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
3	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2N60)	Դաշտային մետաղյա դիելեկտրիկ N-channel տիպի տրանզիստոր 2N60 , լարումը մինչև 600վ, հոսանքի ուժը 2Ա, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
4	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IXFH26N50Q)	Դաշտային մետաղյա դիելեկտրիկ N-channel տիպի տրանզիստոր, լարումը մինչև 500վ, հոսանքի ուժը 26Ա, հզորությունը 300Վտ, , Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
5	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC5763)	Դաշտային NPN տիպի տրանզիստոր, կոլեկտոր-բազա լարումը՝ 700վ, կոլեկտոր-էմմիտոր լարումը՝ 400վ, էմմիտոր-բազա լարումը՝ 7վ, , Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
6	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IRF540N)	IRF540N դաշտային TO-220AB մոնոլիտ կորպուսով դիելեկտրիկ N-channel տիպի տրանզիստոր, լարումը մինչև 100վ, հզորությունը 140 վտ, , Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
7	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC2625)	Դաշտային NPN տիպի տրանզիստոր, կոլեկտոր-բազա լարումը՝ 450վ, կոլեկտոր-էմմիտոր լարումը՝ 400վ, էմմիտոր-բազա լարումը՝ 7վ, հզորությունը 80 վտ , Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
8	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա TA7808F)	դրական լարման արգավորիչ, մուտքային լարումը 14վ, ելքային լարումը 8.3վ, հոսանքի ուժը 500մա, աշխատանքային ջերմաստիճանը -30...85 C:, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
9	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC1815)	NPN անցումով 2SC1815 տրանզիստոր , կոլեկտոր-բազա լարումը 60վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 50վ, էմիտոր-բազա լարումը 7վ, հոսանքի ուժը 200մա, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
10	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SA1020)	NPN անցումով 2SA1020 տրանզիստոր , կոլեկտոր-բազա լարումը 50վ, կոլեկտոր-էմիտորի լարումը 50վ, էմիտոր-բազա լարումը 5վ, հզորությունը 1Վտ, աշխատանքային ջերմաստիճանը -55...125 C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
11	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2SB1570)	IC F3026T ռ/կ-ի համար, 2SB1570 , PNP տիպի տրանզիստոր՝ լարման կարգավորիչ, սնուցման լարումը 160վ, աշխատանքային ջերմ, –55 to +150, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
12	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի DAN222 դիոդ)	IC F3026T ռ/կ-ի համար, DAN222 , Switching 0.3A 3-Pin EMD T/R, սնուցման լարումը 80վ, աշխատանքային ջերմ, -30 to +80 C, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
13	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4452M)	IC F-211 ռ/կ-ի RA30H4452M տրանզիստոր , ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների (440-520 MHz) հզորության ուժեղարարների համար, հզորությունը 30 վտ, լարումը մինչև 12.5վ, աշխատանքային ջերմ, -40 to +110, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
14	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4047M)	IC F-211 ռ/կ-ի RA30H4047M տրանզիստոր , ԳԿԱ տիրույթի ռադիոկայանների (400-470 MHz) հզորության ուժեղարարների համար, հզորությունը 30 վտ, լարումը մինչև 12.5վ, աշխատանքային ջերմ, -40 to +110, Արտադրման տարեթիվ 2013թ. և բարձր
15	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 270 Օհմ)	IC R-75/R-78 ռ/կ-ի SMD ռեզիստոր 2512 , նոմինալ դիմադրությունը 270 Օհմ, հզորությունը 1Վտ, լարումը 250վ, աշխատանքային ջերմ, -55...155 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
16	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 100 Օհմ)	IC R-75/R-78 ռ/կ-ի SMD ռեզիստոր 1206 , նոմինալ դիմադրությունը 100 Օհմ, հզորությունը 0.25Վտ, լարումը 250վ, աշխատանքային ջերմ, -55...155 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
17	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 220 Օհմ)	IC R-75/R-78 ռ/կ-ի SMD ռեզիստոր 0805 , նոմինալ դիմադրությունը 220 Օհմ, հզորությունը 0.125Վտ, լարումը 250վ, աշխատանքային ջերմ, -55...155 C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
18	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkfx25v)	Կոնդենսատոր 47Mkfx25v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 25վ, նոմինալ ունակությունը 47 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
19	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkf x 16v)	Կոնդենսատոր 47Mkf x 16v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 16վ, նոմինալ ունակությունը 47 մկֆ, աշխատանքային

		ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
20	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 63v)	Կոնդենսատոր 470Mkf x 63v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 63վ, նոմինալ ունակությունը 470 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
21	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 10v)	Կոնդենսատոր 1000Mkf x 10v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 10վ, նոմինալ ունակությունը 1000 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
22	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 220Mkf x 50v)	Կոնդենսատոր 220Mkf x 50v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 50վ, նոմինալ ունակությունը 220 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
23	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 35v)	Կոնդենսատոր 470Mkf x 35v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 35վ, նոմինալ ունակությունը 470 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
24	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 50v)	Կոնդենսատոր 470Mkf x 50v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 50վ, նոմինալ ունակությունը 470 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
25	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 50v)	Կոնդենսատոր 1000Mkf x 50v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 50, նոմինալ ունակությունը 1000 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
26	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 3300Mkf x 25v)	Կոնդենսատոր 3300Mkf x 25v, էլեկտրոլիտային ալյումինե կորպուսով աշխատանքային լարումը 25վ, նոմինալ ունակությունը 3300 մկֆ, աշխատանքային ջերմաստիճանը -25...105C, Արտադրման տարեթիվ 2015թ. և բարձր
27	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե SRSZ-12VDC)	Ռելե SRSZ տիպի, հաստատուն հոսանքի, հոսանքի աշխատանքային ուժը 1Ա, աշխատանքային լարումը 12վ, Արտադրման տարեթիվ 1990թ. և բարձր
28	Էլեկտրոնային պարագաներ (Լիցքավորման սարք Motorola XIR P8268)	Լիցքավորման սարք Motorola XIR P8268 ռ/կ համար, մոդել WPLN4226A , տակդիրով, մուտքային լարումը փոփոխական հոսանքից 220-240Վ, 50 Հց, 200մԱ, ելքային լարումը 18վ հաստատուն հոսանք, 900մԱ, Արտադրման տարեթիվ 2012թ. և բարձր

Բոլոր ապրանքները պետք է լինեն նոր և չօգտագործված, գործարանային փաթեթավորման տուփի մեջ:

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն

ՀՀ ՊՆ ՆՏԱ [illegible] պետի ԺԺԿ

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 2
N ՇՀԱՊՁԲ-1/5-4 պայմանագրի

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Չափա բաժնի համար	Ապրանքի անվանում	Չ/Մ	Քանակ	Մեկ միավ. գին /դրամ/	Ընդհանուր գումար /դրամ/	Ապրանքի մատակարարումը 2017թ.՝ ըստ եռամսյակների
						3-րդ եռամսյակ
1	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 20N60C DM-330 սնուցման բլոկի)	հատ	20	3600	72000	20
2	Էլեկտրոնային պարագաներ (DM-330 սնուցման բլոկի MOSPEC դիոդ)	հատ	10	3600	36000	10
3	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2N60)	հատ	20	3000	60000	20
4	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IXFH26N50Q)	հատ	20	5400	108000	20
5	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC5763)	հատ	20	4200	84000	20
6	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IRF540N)	հատ	10	4200	42000	10
7	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC2625)	հատ	10	3600	36000	10
8	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա TA7808F)	հատ	10	2400	24000	10
9	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC1815)	հատ	10	2400	24000	10
10	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SA1020)	հատ	10	2400	24000	10
11	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2SB1570)	հատ	10	3000	30000	10
12	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի DAN222 դիոդ)	հատ	10	960	9600	10
13	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4452M)	հատ	2	24000	48000	2
14	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4047M)	հատ	2	22800	45600	2
15	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 270 Օհմ)	հատ	20	600	12000	20
16	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 100 Օհմ)	հատ	20	600	12000	20
17	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 220 Օհմ)	հատ	20	600	12000	20
18	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkfx25v)	հատ	100	240	24000	100
19	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkf x 16v)	հատ	50	264	13200	50
20	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 63v)	հատ	50	264	13200	50
21	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 10v)	հատ	50	264	13200	50
22	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 220Mkf x 50v)	հատ	100	264	26400	100
23	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 35v)	հատ	50	264	13200	50
24	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 50v)	հատ	50	264	13200	50
25	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 50v)	հատ	100	264	26400	100

26	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 3300Mkf x 25v)	հատ	50	264	13200	50
27	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե SRSZ-12VDC)	հատ	100	462	46200	100
28	Էլեկտրոնային պարագաներ (Լիցքավորման սարք Motorola XIR P8268)	հատ	25	21600	540000	25

ԳՆՈՐԴ
ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետի ՊԺԿ
Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ
Տնօրեն
Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 3
N ՇՀԱՊՁԲ-1/5-4 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

h/h	Գնման առարկան	CPV կոդ	*Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ. ըստ ամիսների բայց ոչ ուշ քան 10.12.2017թ						
				հուլիս	օգոստոս	սեպտ.	հոկտ.	նոյեմբ.	դեկտեմբեր
1	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 20N60C DM-330 սնուցման բլոկի)			72000	72000	72000	72000	72000	72000
2	Էլեկտրոնային պարագաներ (DM-330 սնուցման բլոկի MOSPEC դիոդ)			36000	36000	36000	36000	36000	36000
3	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2N60)			60000	60000	60000	60000	60000	60000
4	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IXFH26N50Q)			108000	108000	108000	108000	108000	108000
5	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC5763)			84000	84000	84000	84000	84000	84000
6	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր IRF540N)			42000	42000	42000	42000	42000	42000
7	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC2625)			36000	36000	36000	36000	36000	36000
8	Էլեկտրոնային պարագաներ (Միկրոսխեմա TA7808F)	31711100/2/4/1		24000	24000	24000	24000	24000	24000
9	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SC1815)			24000	24000	24000	24000	24000	24000
10	Էլեկտրոնային պարագաներ (Տրանզիստոր 2SA1020)			24000	24000	24000	24000	24000	24000
11	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի տրանզիստոր 2SB1570)			30000	30000	30000	30000	30000	30000
12	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի DAN222 դիոդ)			9600	9600	9600	9600	9600	9600
13	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4452M)			48000	48000	48000	48000	48000	48000
14	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի մոդուլ RA30H4047M)			45600	45600	45600	45600	45600	45600
15	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 270 Ohմ)			12000	12000	12000	12000	12000	12000
16	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի			12000	12000	12000	12000	12000	12000

	SMD ռեզիստոր 100 Օհմ)								
17	Էլեկտրոնային պարագաներ (ռ/կայանի SMD ռեզիստոր 220 Օհմ)			12000	12000	12000	12000	12000	12000
18	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkfx25v)			24000	24000	24000	24000	24000	24000
19	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 47Mkf x 16v)			13200	13200	13200	13200	13200	13200
20	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 63v)			13200	13200	13200	13200	13200	13200
21	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 10v)			13200	13200	13200	13200	13200	13200
22	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 220Mkf x 50v)			26400	26400	26400	26400	26400	26400
23	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 35v)			13200	13200	13200	13200	13200	13200
24	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 470Mkf x 50v)			13200	13200	13200	13200	13200	13200
25	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 1000Mkf x 50v)			26400	26400	26400	26400	26400	26400
26	Էլեկտրոնային պարագաներ (Կոնդենսատոր 3300Mkf x 25v)			13200	13200	13200	13200	13200	13200
27	Էլեկտրոնային պարագաներ (Ռելե SRSZ-12VDC)			46200	46200	46200	46200	46200	46200
28	Էլեկտրոնային պարագաներ (Լիցքավորման սարք Motorola XIR P8268)			540000	540000	540000	540000	540000	540000

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ամբողջական կարգով:

ԳՆՈՐԴ
«Պաշտպանության նախարարություն
Ռազմաշինարանի պետի Պետ»

Կ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ
«ՊԻՊԱՍ ՖՈՒԴ» ՍՊԸ

Տնօրեն

Ա. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Հավելված N 4
N ՇՀԱՊՁԲ-1/5-4 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ _____
_____	_____
հվհհ _____	հվհհ _____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՀԱՆՁՆԱՄԱՆ-ԸՆԴՈՒՆԱՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն՝ ի դեմս _____
Պայմանագրի կողմը՝ ի դեմս_____ և
Պայմանագրի կատարման վերաբերյալ «____» «_____» 20 թ. կազմված՝ գնման հայտը նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված մատակարարումները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ մատակարարումների վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 4.1
N ՇՀԱՊՁԲ-1/5-4 պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ——————————————ի (այսուհետ՝ Գնորդ) և
(Գնորդի անունը)
——————————————ի (այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ——— -ին կնքված N ————
(Վաճառողի անունը)
գնման պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. ———— -- -ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
Անվանումը	**Քանակական ցուցանիշը (փաստացի)**	**Չափի միավորը**

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

———————————
ազգանուն, անուն

———————————
ստորագրություն